

ԱՐԵՎԵԼԸԸ ՄԱՐԻԱՄ ԱՍԼԱՍԱԶՅԱՆԻ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ

1970-ական թթ Մ. Ասլամազյանի ճանաչման տարիներն էին. մա շրջագայում է, տեղեղծում քաղմաթիվ մկարմեր, արժամանում մրցանակների: Արևելքը Մ. Ասլամազյանի համար հիացմունքի և ուխտագնացության աղբյուր է: Բազմաթիվ ուղևորությունները Հնդկաստան, Ճապոնիա, Եգիպտոս, Փղոսկրի ափ, Մադագասկար, Կոնգո կազմում են նրա ժառանգության ամրաժամելի մասը: Դամապարհորդությունների ժամանակ Մ. Ասլամազյանն աշխատում էր ամմիջական տպավորության տակ կատարել ճեպանկարներ, որոնք արվեստանոցում վերածվելու էին կտավների: Այսպես են ծնվել նրա արևելյան կենցաղային ժանրի տեղեղծագործությունները, քնատիկ գործերը, մատյուրնորությունները: «Արևելքը ինձ զարմացնում է: Այնտեղ պահպանվել են ազգային սովորույթները, որոնք հուզում են մկարչին իրենց անկրկնելի գունագեղությամբ», - գրել է մկարչուհին¹:

Հնդկաստանում Մ. Ասլամազյանը եղել է երեք անգամ: «Երբ 1957թ. ես գնացի Հնդկաստան տուրիստական ուղևորության, երջանկությունից գլուխս պտտվում էր: Ես չէի կարող հանգստանալ և տարերքի մեջ մկարում էի՝ վախենալով քաց թողնել ինչ-որ կարևոր բան: Հնդկաստանը հրաշքների երկիր է: Այն գերում է ոչ միայն իր թանկարժեք քարերով ու մարգարիտներով, այլև զարմանալի ժողովրդով և գեղեցիկ բնությամբ: Ամեն մի հնդկիկ մեջ կարելի է տեսնել այդ հնագույն մշակույթը. սա գեղեցիկ ժողովուրդ է, որը չափազանց ճաշակով է հագնվում»²:

Հին սովորույթները, խորհրդավոր և անկրկնելի, ատատ և ճոխ բնությունը, մարդն իր ամենօրյա շրջապատի մեջ. ահա այսպիսին է Հնդկաստանը Մ. Ասլամազյանի տեղեղծագործություններում: «Հնդկաստանը, նրա ժողովուրդը վաղուց ինձ հրապուրում էին: Ես կարդացել եմ շատ գրքեր Հնդկաստանի մասին, ուսումնասիրել Հնդկաստանում եղած մկարիչների աշխատանքները: Ես ռատմնասիրել եմ հնդկական արվեստը: Մակայն իրական Հնդկաստանը գերազանցեց իմ բոլոր սպասելիքները: Նրա էությունը դժվար է մկարագրել բառերով ու գույներով: Նա ավելի հարուստ է ու լայն»³:

Ամեն մի մկարիչ յուրովի է ըմկալել այս հնամենի երկիրը: Ռեքիխի կտավներում այն տեղեղծվածային է և խորհրդավոր, Զույկովը պատկերում է նրա գուսպ պոեզիան: Մ. Ասլամազյանի կտավներում Հնդկաստանը ներկայանում է որպես հին սովորույթների և ինքնատիպ մարդկանց երկիր: Տարբեր կանացի կերպարների ցուցասրահից ծնվում է կանանց մկիրված շաքրը: Նրանց կյանքի, աշխատանքի, տեղեղծագործության միջոցով մկարչուհին պատմում է ողջ երկրի մասին: Գունեղ սարիներով երիտասարդ գեղեցկուհիները, օջախի պահապան տարեց կանայք, վարպետուհի կանայք, մանուկներին կերակրող կանայք... Նրանց ընդհանրացված կերպարներից ծնվում է Մ. Ասլամազյանի Հնդկաստանը:

«Պարտիին Մադրասից» (1967թ.) կտավը տուրք է հնդկական մշակույթին: Դեռահաս կիսամերկ աղջիկը տվելի շուտ հիշեցնում է ծաղիկ, արևադարձային միրգ: Կտավը կառուցված է վառ գույներով, լուկա ըսվածքներով: Ընդհանուր առմամբ, կտավը դեկորատիվ է, կոլորիտային: Այս գործի շարունակությունը «Հնդկուհին հյուր գնալիս» (1970թ.) կտավն է, որտեղ պատկերված կինը պատկանում է միջին դասին: Նրա մեջ մկարչուհին տեսնում է ամատիման կանացիություն, նրբագեղություն, մակ՝ գիշատիչ արտահայտություն: Դեղնավուն սարին, ոսկյա ակամջօղն ու ապարանջանը ամբողջացնում են կերպարը: Հնդկուհին պատկերված է քաց ֆոնի վրա, ինչն ընդգծում է նրա դեմքի և մարմնի առողջ շազանակագույնը:

Հնդկուհու մի այլ տիպ՝ ռսամոդուհու, կարելի է տեսնել «Ուսամոդուհին Դե-

¹ Советская культура, Ег., 17. 02. 1976.

² М. А с л а м а з я н, Дастар мей жизни, М., 1990, стр. 54.

³ Moscow News, 24.03.1972; Д. Сарабянов, Мариам Асламазян, „Советский художник“, 1979, стр. 20.

լից» (1970թ.) կտավում: Արևելյան դիմագծերով աղջկա ազգությունը բացահայտում են հնդկական մախշերով քաթամը, քարծը, ինչպես նաև պատից կախված հնդկական դիմակը: Գույնը դարձյալ դառնում է ձևակազմիչ տարր: Մուգ կապույտն ու կարմիրը հավասարակշռված են արծաթագույն երկզմերով: Իսկ աղջկա ձեռքի վառ դեղին գիրքը ամսպատեղի երանգավորում են մտցնում կտավի մեջ: Ճիշտ է, կերպարը փոքր-ինչ կաշկամրված է, սակայն վառ գունաշարը մկաբը դարձնում է կոտորիտային, ակտիվ:

Մ. Ասլամազյանի համար հատկապես հիշարժան եղավ 1973թ. այցելությունը Հնդկաստան, երբ արժանանալով Ջ. Ներուի մրցանակին՝ մա Հնդկաստանում համդի-պեց Ինդիրա Գանդիի հետ: Մ. Ասլամազյանը մեծ հիացմունքով է մկարագրում այդ հանդիպումը. «Մենայի դռների մոտ կանգնած էր ոչ քարճառասակ, շատ հմայիչ մի կին: Նա ձեռքը մեկնել էր մեզ ողջունելու: Նրա մեջ զարմանալի կերպով զուգորդվում էին կանացի նրբագեղությունը՝ տղամարդու կամային քնալորության հետ: Երբ նա հարցրեցի, թե ինչպես է նրան հաջողվել այդքան դժվար աշխատանքի հետ մնալ կանացի և գեղեցիկ, Ինդիրա Գանդին արևելյան իմաստությամբ պատասխանեց. «Գեղեցկությունը նրա աչքերում է, ով դա տեսնում է»:⁴ Վերադառնալով հայրենիք՝ Մ. Ասլամազյանը մկարում է Ինդիրա Գանդիին հոր դիմանկարի ֆոնի վրա: Նկարը ցուցադրվեց Մոսկվայում, Բոմբեյում: Մ. Ասլամազյանը 1975թ. մկարը մկրեց Ինդիրա Գանդիին, որն այն համարեց իր ունեցած լավագույն դիմանկարներից մեկը:

Թեմատիկ ստեղծագործությունները՝ «Ժողովրդական քրտագործուհին» (1971թ.), «Աշխատանքային օրից հետո Ջայադրում» (1971թ.) ընդհանրացված են, համարում են կենցաղային ժանրը դիմանկարի հետ: «Ժողովրդական վարպետուհին» լավագույն գործերից է: Նկարը կառուցված է գույնի և ռիթմի զուգորդման միջոցով: Վառ լուկալ գույները՝ մարմնագույնը, կապույտը, օխրան հաջորդում են միմյանց: Դրանց հարաբերությունը ծաղաատիճան սրված է, և միայն պլաստիկ ռիթմն է մկարը պահում հավասարակշռության մեջ: Նկարի հիմնական ձևը կորագիծն է: Վարպետուհու ծաղապատիկ դիրքը հիշեցնում է ստիտների ձևերը: Նրա ձեռքի ապարամջանը մերդաշնակվում է սափորների զարդամախշերի միջոցով, ոտքի և տանդալի հարաբերությունը կրկնվում է մեքլամանի վրա: Հնդկաստանը պատկերելիս դարձյալ Մ. Ասլամազյանը մնում է հոգեհարազատ հայի գունագզացողությամբ՝ պահպանելով դեղինը, կարմիրը ու կապույտը, որոնք բխում են հայկական մանրանկարչությունից, Միմասի ստեղծագործությունների գունեղանքներից:

«Հնդկաստանի կանայք» կտավը (1973թ.) մոմտմնատալ ստեղծագործություն է: Կոմպոզիցիոն կառուցվածքով այն հիշեցնում է «Հայաստանը այսօր» կտավը: Կենտրոնում պատկերված է ոսկե սարիով հնդկուհին՝ ձեռքին մանուկ, որի դեմքը թև չի երևում, սակայն նա է «պահում» ողջ կոմպոզիցիան: Հավանաբար նրա մասին է գրել Մ. Ասլամազյանը. «Հնդկուհին մտած էր օվկիանոսի ափին: Ինձ էին ուղղված խոշոր, քարի աչքերը, որոնք օժտված էին ներքին արժանապատվությամբ և մաքրությամբ: Նրա հագին ոսկեգույն սարի էր, ձեռքին՝ ոսկե ակամջօղով մի հրաշալի մանուկ: Նրանք կարծես լինեին Հնդկաստանի խորհրդանիշը»:⁵ Նկարում պատկերված մշուս հնդկուհիները ևս տիպային կերպարներ են: Գույները նրբորեն հավասարակշռված են՝ դեղինը կարմիրի հետ, մանուշակագույնը՝ սպիտակի, մուգ կանայք՝ մուգ կարմիրի հետ: Այս խաղաղուհու գունաշարը ամրացված է կարմրադարձնագույն և վարդագույն ֆոնով, որն իր հերթին ակտիվանում է վերին մասի լազուր կապույտով:

Հնդկական թեմաներով մատյուրմորությունում ապրում է Հնդկաստանի մի մասնիկը, «Հնդկաստան» (1970թ.), «Նատյուրմորտ հնդկական կոշիկով» (1970թ.), «Նատյուրմորտ Հնդկական կտորով և սև խաղողով» (1973թ.): Բավական է՝ մկարչուհին իր ձեռքի տակ ունենա ճամապարհորդությունից թերված հուշանվեր, իր, մենք տեսնում և գգում ենք ավյալ երկրի շունչը, կլիման, գույները:

Երկրորդ երկիրը, որ այցելում է Մ. Ասլամազյանը, Եգիպտոսն էր: Դա տեղի ունեցավ 1967թ., երբ Աստանի ջրանցքը կառուցողների հետ միասին Մ. Ասլամազյանը ուղևորվում է այնտեղ: Ինքնաթիռից գցած առաջին հայացքը վերևից կամխորշում է

⁴ М. Асламзян, *Աշվ. աշխ.*, էջ 55:

⁵ М. Асламзян, *Об Индии, "Советская страна", N 8, 1987, стр. 30.*

Մ. Արամազյանի Եզդիական շարքի գումաշարը: Այդ շարքերը կատարված են տեմպերայով՝ թղթի վրա: Դրանք ճանապարհորդական ճեպանկարներ են, որոնց միջոցով նկարչուհին ուսումնասիրում է Եզդիական տարվա տարբեր ամիսներին, օրվա տարբեր ժամերին, նրա պատմությունը: Ներկան: Նրա տեմպերային շարքերում քնքուշ առավոտը («Աստան գյուղի արևածագը» 1967թ.) հետզհետե վերածվում է տոթ կեսօրի («Աստան գյուղը» 1967թ.), որին հաջորդում է գուլ երեկոն («Փողոց Լուկաբում» 1968թ.)՝ իր գումային հակադրություններով: Այս ստեղծագործություններում մենք չենք տեսնի արևը ուղղակիորեն, սակայն նա տիրում է ամենուրեք. «Ես հասկացա, թե ինչու էր եզդիատացիների մոտ արևը գլխավոր աստվածություն համարվում: Ես այս երկիրը ընկալեցի որպես արևի թագավորություն: Նրա շողերի ներքո ծնվում են վառ գույներ, լույս ու սուփերի հակադրություններ»:⁶

Եզդիական թողած տպավորությունն այնքան մեծ էր, որ նկարչուհին ոչ միայն նկարում էր, այլև գրառումներ կատարում իր նոթատետրում. «Ես վախենում էի, որ դարերի ընթացքում եզդիական արվեստը հղկվել է բացարձակության աստիճանի: Սակայն իմ տեսածը գերազանցեց բոլոր սպասելիքներս: Ամեն մի արվեստ իր բարձրակետում լինում է վիթխարի և պարզ միաժամանակ, ինչպես Սֆինքսն ու Ջեոփսի բուրգը: Նրանց մեջ կա ձգողականություն և անհասանելիություն: Այդ հրեշը նայում է քեզ վերևից և տեսնում է ապագան: Նրա կողքին մարդը իրեն զգում է մի թրթուր: Ուրքան մեծ մարդիկ են անցել նրա կողքով, իսկ նա անմղով կանգնած նայում է հավերժությանը՝ առեղծվածային ուժով»:⁷

Նկարչուհին այցելում է Կահիրե, լինում է Մեմֆիսում, ապրում է Աստան գյուղում: Նրա համար ամենահետաքրքիրը դառնում են հանդիպումները մարդկանց հետ: Եթե կանաք սկզբում նայում էին նրան կասկածաբար, սակայն իմանալով, թե որ երկրից է նկարչուհին, սկսում են ծալտալ և մույնիսկ թույլ են տալիս իրենց նկարել, ինչը այնքան էլ բնորոշ չէ տեղաբնիկներին: Եզդիական շարքի համար Մ. Արամազյանը 1976թ. արժանանում է Համալ Արդել Նասրի անվան մրցանակի:

Նկարիչն առավել, քան որևէ արվեստագետ, մնալով իր նախասիրած գուներանգների ու քնմատիկայի սահմաններում, որպես կանոն, անմիջականորեն է արձագանքում այն մոր իրականությանն ու տպավորություններին, որոնց ակնհայտն է դառնում: Այդպիսին եղավ Մարիամ Արամազյանի իր արևելյան կաավերում:

ВОСТОК В КАРТИНАХ МАРИАМ АСЛАМАЗЯН

Резюме

А. Маркарян

Семидесятые - годы признания таланта Мариам Асламазян. Она много путешествует, открывает для себя новые страны. Воспитанная на традициях русской культуры, М. Асламазян особенно восприимчива к Востоку. Ее любовью и привязанностью становится Индия, страна с древней и самобытной культурой. С ее полотном перед нами предстают яркая тропическая природа, обычаи и быт этой древней цивилизации, и люди, красивые и гордые, мужественные и непокоренные ...

Индийским произведениям Мариам Асламазян своеобразную ноту придает ее особое отношение к Индира Ганди, с кем она неоднократно встречалась и не переставала восхищаться.

⁶ *Московский художник*, 5. 02.1976.

⁷ *М. А с л а м а з я н, Давтар..., стр. 108:*